



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ
« 10 » 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 91

Ձեռնարկողը՝

<<Արծաթե Սյուն>> ՍՊԸ
Արագածոտնի մարզ, Արագած համայնք

Գործունեությունը՝

Գոգհովիտի բազալտի հանքավայրի արդյունահանման
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվեքվություն
Շիրակի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 91

«17» 10 2018թ.

Շիրակի մարզի Գոգհովիտի բազալտի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	<<Արծաթե Սյուն>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	<<Ա>>
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզ, Սարապատ համայնք

Գոգհովիտի բազալտների հանքավայրը վարչական առումով գտնվում է Շիրակի մարզում Թորոս գյուղից 3.5կմ դեպի արևմուտք և Գոգհովիտ գյուղից 1.3կմ դեպի հյուսիս: Գոգհովիտի բազալտների հանքավայրի պաշարները հաստատվել է ՀՀ ՕՀՊԳ-ի 03.06.2006թ. N99 արձանագրությամբ: 01.01.2016թ-ի դրությամբ հանքավայրում մնացորդային պաշարները կազմում են 109.47 հազ.խմ:

Հանքավայրը շահագործվում է 2006թ-ից, գործող հանքավայրի տարածքը կազմում է 0,3հա, նախատեսվող հանքավայրի մակերեսի փոփոխություն չի նախատեսվում:

Գոգհովիտի բազալտի հանքավայրի պաշարները ուսումնասիրվել է երեսապատման իրերի բլոկների արտադրության համար: Պիտանի բլոկների ելքը հաստատված է 31%:

Գոգհովիտի բազալտների հանքավայրը նախատեսվում է շահագործել բաց եղանակով: Բացահանքը ունի հետևյալ պարամետրերը՝

- առավելագույն երկարությունը – 100,0մ;
- առավելագույն լայնությունը – 33,0մ;
- մշակման խորությունը- 10,3մ;
- մակաբացման ապարների քանակը – 380,0մ³:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է

- ըստ բազալտային զանգվածի- 1360,0խմ,
- ըստ բլոկների-409,4խմ,
- ըստ թափոնների -950,6խմ,
- ըստ մակաբացման ապարների-380,0խմ:



Բացահանքի շահագործման համար ընդունված է աշխատանքների սեզոնային ռեժիմը: Բացահանքի ծառայման ժամկետը 12 տարի է:

Բացահանքում մակաբացման ապարները հեռացվելու են շահագործման 1-3 տարիների ընթացքում:

Բացահանքի հանքաստիճանների բացումը կատարվելու է մուտքային ավտոճանապարհից բացող կիսախրամների անցումով:

Բացահանքի մշակումը նախատեսվում է կատարել հորատասեպային եղանակով:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են՝

- հանքաստիճանի բարձրությունը – 2.0մ
- հանքաստիճանի թեքման անկյունը – 90°;
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը - 20մ;
- հանույթային բլոկի երկարությունը-6,0-8,0մ;
- ընթացքաշերտի լայնությունը-1,0-1,5մ:

Բացահանքի կառուցման և շահագործման ժամանակ բազալտի զանգվածի նախագծային կորուստները պայմանավորված են օգտակար հաստաշերտի լեռնատեխնիկական տեղադրման պայմաններով և շահագործման տեխնոլոգիայով:

- 903,5խմ կամ 5,3% կորուստներ, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում:

- 503,5խմ կողերում մնացող կորուստներ:

- 500խմ կամ 2,9% շահագործողական կորուստներ, որոնք պայմանավորված են հանքաստիճանների բացման ժամանակ բացող կիսախրամների անցման ժամանակ տեղի ունեցող կորուստներով:

Միաքարի անջատման համար սեպանցքերի հորատումը կատարվելու է ՈՈ-50B հորատման մուրճերով: Միաքարի հեռացումը հանքախորշերից դեպի մշակման վայրը, ինչպես նաև մակաբացման ապարների և թափոնների տեղափոխումը և կուտակումը կատարվելու է Ճ3-170,1 մակնիշի բուլդոզերով: Միաքարի մասնատումը բլոկների կատարվելու է հիդրոսեպային աշխատանքներով: Բլոկների բարձումը KPA3-256B ավտոմեքենայի մեջ կատարվելու է KC-3577 մակնիշի ավտոկունկի միջոցով, իսկ մակաբացման ապարների և թափոնների բարձումը՝ ՅՕ-4321 էքսկավատորով:

Բացահանքի շահագործման ընթացքում մակաբացման ապարները և թափոնները արտաքին լցակույտերում պահեստավորվելու են առանձին-առանձին:

Բացահանքի շահագործումից հետո մակաբացման ապարները տեղափոխվելու են մշակված տարածություն, փռվելու և հարթեցվելու են բացահանքի հատակին, իսկ թափոնները նախատեսվում է թողնել լցակույտում՝ հետագայում շինարարական խճի արտադրությունում իրացնելու նպատակով:

Մակաբացման ապարների լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 650քմ, իսկ թափոնների լցակույտի զբաղեցրած տարածքը՝ 900քմ:

Մշակված տարածության վերակուլտիվացված տարածքը կազմում է 2600քմ: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսված է 861,13հազ. դրամ:

Բացահանքը կարգաբերելու համար անհրաժեշտ է կատարել լեռնանախապատրաստական աշխատանքներ՝

- մուտքային ավտոճանապարհի անցում - 220մ,
- բացող կիսախրամի անցում -20.0մ,
- մակաբացման ապարների հեռացում - 180մ³,
- աշխատանքային հրապարակի ստեղծում /ուղեկցող հանույթ/-900քմ,



- արդյունաբերական հրապարակի կարգաբերում -300քմ:

Բացող կիսախրամների անցումը կատարվելու է հորատասեպային աշխատանքներով և լեռնատրանսպորտային համալիրով:

Բացահանքի եզրագծի սահմաններում մակաբացման ապարները ներկայացված են ժամանակակից առաջացումներով:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվելու է բացահանքի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակույտերը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար:

Խմելու ջուրը բերվելու է ԱԿ-ԹՃԹ-1.4 ջրի կցովի ցիստեռնով:

Փոշենստեցման նպատակով տեխնիկական ջուրը բերվելու է KO-002 մակնիշի ջրցան-լվացող ավտոմեքենայով, Գոգհովիտ գյուղից:

Հանքավայրի մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Ելնելով այն հանգամանքից, որ բացահանքի տարածքն ամբողջովին մշակված է և նախկինում շահագործված, նոր տարածքների օտարում չի նախատեսված, ուստի բացահանքի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի շրջանում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն:

Ըստ նախագծային փաստաթղթերի նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում, որին տրվում է համապատասխան թեքություն՝ թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը ապահովելու նպատակով:

- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:

- Ճանապարհների ջրցանում՝ տարվա չոր և շոգ օրերին:

- Մեքենաների սարքավորումների վրա վտանգավոր նյութերի չեզոքացուցիչների տեղադրում՝ վնասակար նյութերի արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով:

- Մեխանիզմի աշխատանքի ժամանակ վառելիքի և քսայուղերի արտահոսքի վերահսկում և կանխում:

- Օգտագործվող ագրեգատների և սարքավորումների սարքին վիճակում աշխատեցում՝ վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու նպատակով:

- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:

- Սոցիալական ազդեցություններին ուղղված միջոցառումներ:

- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

Տեղամասի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները:

- Մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ տարին երկու անգամ հաճախականությամբ:

- Արտադրական հրապարակի տարածքը նավթամթերքների աղտոտումից զերծ պահելու նպատակով տարին մեկ անգամ հողերի աղտոտվածության մշտադիտարկում:

- Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ:



Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում են:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Շիրակի մարզի Սարապատ համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության ստորաբաժանումները: Առկա է <<Արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության>> փորձաքննական դրական եզրակացությունը:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է << օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ, կազմել հետնախազձային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

3. Գործունեության իրականացման ընթացքում առաջացած թափոնների (օգտագործված յուղեր, քսայուղեր, հնամաշ դետալներ և այլն) կառավարումն ու հեռացումն իրականացնել << օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Արծաթե Սյուն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի Գոգհովիտի բազալտի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Ա. Դոնոյան

Գլխ. մասնագետ

Չ. Չուռնայան

